# ԿԱ ՄԻ ՋՐՈՒՅՑ, ԹԵ...

## Առաջադրանքներ

**1.** Սյունակներից ընտրի՛ր և դեմ դիմաց գրի՛ր հոմանիշ բառերը:

| | |
|---|---|
| Զամբյուղ | բաղրիջան |
| սմբուկ | կողով |
| բամբիշ | փետուր |
| բմբուլ | թագուհի |
| բանտ | դիմանալ |
| համբերել | կալանավայր |

**2.** Տրված բառերը խմբավորի՛ր ըստ *մ* կամ *ն* բաղաձայնի գրության:

Բա_բասանք, բա_բեր, ա_բիծ, ա_պ, գ_բեթարդ, զա_բյուղ, հա_պատրաստից, հա_բերել, հա_բուրել, ա_բուժելի, ա_պաճույճ, ա_բոխ, ա_բիոն, ա_ֆիթատրոն, ա_պամած, ա_պատրաստ, ա_պայման, ա_պատեհ, շա_փրել, ա_պետք, ա_բաժան, ա_բաստանյալ, ա_բավարար, ա_պակաս, շա_բուտ, ու_պ, ա_պրոպ, ա_բան, ա_բասիր, ա_բար, ա_բարիշտ, ա_բարտակ, ա_փույթ, ա_բարտավան, ա_բողջովին, ռ_գային, ս_բակավոր, փա_փշտակալ, փոխը_բռնում, ա_վեհեր, ա_վստահ, ա_փոփում, ա_փոփոխ:

| Մ | Ն |
|---|---|
| | |

**3.** Հետևյալ բառերով կազմի՛ր մեկական նոր բառ՝ ավելացնելով արմատ կամ ածանց.

| | |
|---|---|
| ըմբոստ _________ | ճամփա_______ |
| ամբար__________ | ռումբ_________ |
| ըմպել __________ | ումպ ________ |
| ամբարտավան_______ | քիմք _________ |

**Նմուշ՝** ըմբոստ – ըմբոստանալ:

**4.** Լրացրո՛ւ բաց թողնված տառը՝ *ն* կամ *մ*:

Մա_վելն ու Սա_վելը մանկության ընկերներ էին: Նրանք իրարից միշտ ա_բաժան էին: Դեռ փոքր էին, երբ վերցնում էին զա_բյուղները և գնում այգի՝ դա_բուլ հավաքելու: Ամեն օր խաղում էին գետեզրի շա_բուտում: Սիրում էին իրենց մայրիկներին և հաճախ էին փախչում մոտակա սարը՝ նրանց համար սարի ս_բուլ ու սուսա_բար բերելու: Ապրում էին գյուղական ա_պաճույճ կենցաղով ու երջանիկ էին:

Պատանեկության ա_բասիր անուրջներն անավարտ մնացին. սկսվեց պատերազմը: Ա_բարիշտ ֆաշիստները հարձակվեցին մեր երկրի վրա: Ա_բարտավան հրոսակներին հակահարված տալու և հայրենիքի պատիվն ա_եղծ պահելու համար տղաները մեկնեցին ռազմաճակատ: Հոծ ա_բոխ էր հավաքվել կայարանում: Հրաժեշտի ա_պագոռգոռ խոսքեր չասվեցին: Ժողովուրդն ա_բարբառ, տխուր-տրտու_ ճամփա գցեց իր սիրասու_ զավակներին:

**5.** Նախորդ վարժության տեքստը համալրի՛ր նոր հերոս(ներ)ով՝ գործողություններին նոր ընթացք հաղորդելով: Վերնագրի՛ր: